

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նանե Սահակյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

«Գնումների գործընթացի մասնակից» (այսուհետ նաև՝ մասնակից) արտահայտությունն օգտագործվում է գնումների գործընթացի այն փուլում, որն առաջանում է պետական պատվերը տեղաբաշխելու ժամանակ: Նախքան այդ գործընթացը սկսելը մասնակիցը որևէ գործառույթ չունի: Այս առումով գնումների գործընթացի մասնակիցը տարբերվում է մասնավորապես պետական պատվիրատուից, ով մասնակցում է նաև տվյալ փուլին նախորդող գործընթացներին:

Գնումների գործընթացին առնչվող տարբեր իրավական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մասնակցին տրվող հետևյալ անվանումները.

1. **մատակարար կամ կապալառու**, այսինքն՝ ըստ համատեքստի՝ ցանկացած պոտենցիալ կողմ կամ ցանկացած կողմ՝ գնումների գործընթացում պատվիրատուի հետ միասին¹,

2. **մատակարար**²,

3. **մատակարար**՝ անձ կամ անձանց խումբ, որոնք տրամադրում կամ կարող են տրամադրել ապրանքներ կամ ծառայություններ³,

4. **մասնակից**՝ պատվիրատուի հետ պայմանագիր (չրջանակային համաձայնագիր) կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ, **ընտրված մասնակից**՝ մասնակից (մասնակիցներ), որին պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր (չրջանակային համաձայնագիր)⁴,

5. **մասնակից**՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ, **ընտրված մասնակից**՝ մասնակից (մասնակիցներ), որին պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր⁵,

6. **մասնակից, ընտրված մասնակից, պայմանագրի կողմ** (կապալառու, մատակարար և այլն)⁶:

Փաստորեն, ներպետական օրենսդրությունում որպես գնումների գործընթացի մասնակցի ընդհանրական անվանում օգտագործվում են հիմնականում մասնակից և ընտրված մասնակից եզրույթները: Գնումների գործընթացի կարգը սահմանող ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշման թիվ 1 հավելվածը օգտագործում է նաև պայմանագրի կողմ (կապալառու, մատակարար և այլն) արտահայտությունը:

¹ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) 2014 թվականին մշակած «Պետական գնումների մասին» մոդելային օրենքի 2-րդ հոդվածի «տ» կետը, աղբյուր՝ <https://www.uncitral.org/pdf/english/texts/procurement/ml-procurement-2011/2011-Model-Law-on-Public-Procurement-e.pdf>, 28.01.2017 թվականի դրությամբ:

² Տե՛ս «Պետական գնումների մասին» համաձայնագրի տեքստում (ընդունվել է 12.04.1979 թ. և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտել 15.09.2011 թ.):

³ Տե՛ս «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրի 1-ին հոդվածի «մ» կետը (Հայաստանի Հանրապետության համար ուժի է մեջ մտել 05.06.2015 թվականին):

⁴ Տե՛ս 22.10.2010 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ գործող օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերը:

⁵ Տե՛ս 16.12.2016 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի (դեռևս ուժի մեջ չի մտել) 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը:

⁶ Տե՛ս «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011 թ. թիվ 168-Ն որոշման տեքստում:

հայտությունը, սակայն միայն մեկ տեղ՝ ընդհանրական ներկայացնելով պայմանագիր կնքած անձանց: Ինչ վերաբերում է վերոնշյալ այլ իրավական ակտերում օգտագործվող մատակարար և (կամ) կապալառու եզրույթներին, ապա դրանք, կարծում ենք, ընդունելի չեն, քանց որ մատակարար կամ կապալառու անվանումը գնումների գործընթացին մասնակող անձանց ընդհանրական բնութագրելիս օգտագործելը կարող է առաջացնել քաղաքացիական օրենսդրությունում օգտագործվող եզրույթների հետ անհամապատասխանություն, քանի որ գնում իրականացվում է ոչ միայն ապրանքների մատակարարման կամ աշխատանքների կատարման համար, այլ նաև մասնավորապես ծառայությունների մատուցման համար:

Գնումների ոլորտը կանոնակարգող հատուկ օրենքի տեսանկյունից գնումներին մասնակցող անձը կարևորվում է ոչ թե որպես պայմանագրի ապագա կողմ, այլ որպես գնումների ընթացակարգերին մասնակցող անձ, ում նկատմամբ գնումների վերաբերյալ օրենսդրությունը կիրառվելու է առավելապես հենց այդ ընթացքում, իսկ պայմանագիր կնքելիս վերջինիս նկատմամբ հիմնականում կիրառվելու է քաղաքացիական օրենսդրությունը: Հետևաբար գտնում ենք, որ գնումների գործընթացին մասնակցող անձանց մինչև պայմանագիր կնքելը պետք է անվանել մասնակից կամ ընտրված մասնակից, իսկ պայմանագիր կնքելուց հետո, երբ արդեն կնքված է քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից պայմանագրի կոնկրետ տեսակ, կարելի է անվանել նաև տվյալ պայմանագրի սուբյեկտներին տրվող անվամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությունը նախատեսում է գնումներին մասնակցելու հավասարության սկզբունքը, ինչը նշանակում է, որ ցանկացած անձ, անկախ նրա կարգավիճակից (քաղաքացիություն չունեցող անձ, օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձ), ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Պետք է նշել, որ գնումների գործընթացում օտարերկրյա անձանց ազգային ռեժիմ տրամադրելու վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն: Այս հարցը հատկապես հատուկ սրություն էր ձեռք բերել համաշխարհային ֆինանսական-տնտեսական ճգնաժամի ժամանակ, որի 1-ին փուլը 2007-2009 թվականներին էր¹: Անգամ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի 2014 թվականին մշակված «Պետական գնումների մասին» մոդելային օրենքը հնարավորություն է տալիս օտարերկրյա անձանց համեմատ արտոնություն կիրառել ազգային մատակարարների կամ կապալառուների նկատմամբ²: Այդ է պատճառը, որ այս մոդելային օրենքով առաջնորդված պետությունների մի մասը (հիմնականում ԱՊՀ երկրներ) արտոնություններ են տրամադրում ազգային սուբյեկտներին³: Որոշ երկրներում էլ օտարերկրյա անձինք գնումների գործընթացին կարող են մասնակցել միայն տեղական գործակալների միջոցով (Եգիպտոսում) կամ տեղական հովանավոր կամ գործընկեր ձեռք բերելու միջոցով (Օմանում)⁴:

Եվրոպական միության երկրները հավասար մոտեցում են դրսևորում ազգային և օտարերկրյա սուբյեկտների նկատմամբ: Եվրամիության պետական գնումների

¹ Տե՛ս **Кичик К.В.** Государственный (муниципальный) заказ как средство государственного регулирования экономики: правовые вопросы: диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 129:

² Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) 2014 թվականին մշակված «Պետական գնումների մասին» մոդելային օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «b» կետը, աղբյուր՝ <https://www.uncitral.org/pdf/english/texts/procurement/ml-procurement-2011/2011-Model-Law-on-Public-Procurement-e.pdf>, 28.01.2017 թվականի դրությամբ:

³ Տե՛ս **Кичик К.В.** նշվ. աշխ., էջ 129:

⁴ Տե՛ս **Кузнецов К.В.** Настольная книга поставщика и закупщика: торги, конкурсы, тендеры, М., 2003, էջ 131:

վերաբերյալ օրենսդրության հիմնական խնդիրներից մեկն էլ առևտրային պատնեշների վերացումն է՝ ամրապնդելով ԵՄ ընդհանուր շուկայում ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժը: Ավելին, Եվրոպական հանձնաժողովը հատուկ աշխատանքային փաստաթուղթ է հրապարակել, որում կարևորում է այնպիսի պատնեշների վերացումը, ինչպիսիք են իրավական, վարչական կամ լեզվական (տերմինաբանական) խոչընդոտները, որոնց պատճառով Եվրոպական միության անդամ պետությունների քաղաքացիները խուսափում են մասնակցելուց մեկ այլ երկրում անցկացվող պետական գնումներին¹: Այլ կերպ ասած՝ Եվրոպական միությունը ոչ միայն որդեգրել է ազգային ռեժիմ, այլ նաև ուղիներ է փնտրում խթանելու անդամ պետությունների քաղաքացիների մասնակցությունը պետական գնումների գործընթացին: Ազգային ռեժիմ են որդեգրել նաև այլ երկրներ: Մասնավորապես, Ավստրալիայում նախկինում ազգային սուբյեկտներն արտոնություններ են ունեցել օտարերկրյա անձանց նկատմամբ, սակայն ներկայումս դա վերացել է: Բրազիլիայում նույնպես գործում է ազգային ռեժիմ, սակայն արտոնություն է տրվում որոշ տեխնոլոգիաների արտադրության ոլորտում ազգային սուբյեկտներին²: Ազգային ռեժիմ է գործում նաև Ճապոնիայում³:

Ռուսաստանի Դաշնությունում 1999 թվականի օրենքի 6-րդ հոդվածով ազգային սուբյեկտներին տրվում էր առավելություն՝ նախատեսելով, որ օտարերկրյա մատակարարը (կատարողը) պետական կարիքների համար մրցույթին կարող է մասնակցել միայն այն դեպքում, եթե ՌԴ-ում համապատասխան ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը բացակայում են կամ տնտեսապես նպատակահարմար չեն⁴: 2005 թվականի օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում էր ազգային ռեժիմ, սակայն միայն փոխադարձության սկզբունքից ելնելով, այսինքն հաշվի էր առնվում, թե պոյոք նույն ազգային ռեժիմը նախատեսված է տվյալ օտարերկրյա պետությունում⁵: 2013 թվականի գործող օրենքի 14-րդ հոդվածը նախատեսում է ազգային ռեժիմ օտարերկրյա անձանց համար⁶:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի մաս կազմող միջազգային պայմանագրերից ազգային ռեժիմ է նախատեսվում «Պետական գնումների մասին» համաձայնագրով և «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրով: «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի⁷ 88-րդ հոդվածով նույնպես սահմանվում է անդամ պետություններին գնումների ոլոր-

¹ St' u Daniela Pîrvu and Cristina Bâldan «Access to the EU Public Procurement Market: Are There Disparities Based on the Origin of Economic Operators?», Journal Of Economic Issues, Vol. XLVII, No. 3, September 2013, էջեր 765-766:

² St' u Veiko Lember, Rainer Kattel, Tarmo Kalvet Public Procurement, Innovation and Policy International Perspectives, Springer-Verlag, Berlin, Heidelberg, 2014, էջեր 42, 75:

³ St' u «Международный прокьюремент» /В. Малочко, Т. Уилсон, Г. Вестринг, К. Мера и др./, Москва, 2003, էջ 252, աղբյուր՝ <http://gosbook.ru/system/files/documents/2011/04/27/Prokiurement.pdf>, 28.01.2017 թվականի դրությամբ:

⁴ St' u Федеральный закон от 06.05.1999 N 97-ФЗ «О конкурсах на размещение заказов на поставки товаров, выполнение работ, оказание услуг для государственных нужд», աղբյուր՝ <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=23004#0>, 28.01.2017 թվականի դրությամբ:

⁵ St' u Федеральный закон от 21.07.2005 N 94-ФЗ (ред. от 02.07.2013) «О размещении заказов на поставки товаров, выполнение работ, оказание услуг для государственных и муниципальных нужд», աղբյուր՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_54598/c7da3df6b860b72fbac4b7fa3c73a74e34a4a85e/, 28.01.2017 թվականի դրությամբ:

⁶ St' u Федеральный закон от 05.04.2013 N 44-ФЗ (ред. от 28.12.2016) «О контрактной системе в сфере закупок товаров, работ, услуг для обеспечения государственных и муниципальных нужд», աղբյուր՝ <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=210050#0>, 28.01.2017 թվականի դրությամբ:

⁷ Ընդունվել է 29.05.2014 թվականին, ուժի մեջ է մտել 02.01.2015 թվականին:

տում ազգային ռեժիմի տրամադրում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությանը, ապա անկախությունից ի վեր ընդունված գնումների գործընթացը կանոնակարգող 4 օրենքներում նախատեսվել են հետևյալ կարգավորումները.

1. 05.06.2000 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի¹ 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն իրավունք չունի սահմանափակել որևէ անձի՝ գնումների գործընթացին մասնակցության իրավունքը, սահմանել մասնակիցների որակավորման այնպիսի չափանիշներ, որոնք պայմանավորված են մասնակցի՝ որևէ պետության ղեկիղենտը լինելու հանգամանքով, կրում են խտրական բնույթ կամ սույն օրենքով չնախատեսված այլ չափանիշներ: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ պետության ղեկիղենտի մասնակցության իրավունքը, օրենսդրությանը համապատասխան, կարող է սահմանափակվել կառավարության կողմից, եթե դա բխում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության շահերից: Սույն օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքների և ծառայությունների գնման դեպքում, լիազոր մարմնի համաձայնությամբ, պայմանագիրը կնքելու նախապատվությունը մինչև առաջարկվող գնի քսան տոկոսի չափով տրվում է այն մասնակցին, որը պարտավորվում է պայմանագիրը կատարելու ժամանակ ավելի քան հիսուն տոկոսի չափով օգտագործել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և արտադրական ռեսուրսները: Այդ նախապատվությունը կարող է կիրառվել, եթե բաց մրցույթով գնումների կատարման ժամանակ նախատեսված է մրցույթի հրավերի մեջ:

2. 06.12.2004 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի² 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ օտարերկրյա ֆիզիկական անձի, կազմակերպության, քաղաքացիություն չունեցող անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա բխում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության շահերից:

3. 22.12.2010 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

4. 16.12.2016 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Գնումների գործընթացին որևէ երկրի ղեկիղենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքների վերլուծությամբ հանգում ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունը միշտ որդեգրել է օտարերկրյա անձանց համար ազգային ռեժիմ՝ միայն 2000 թվականի օրենքով նախատեսելով սահ-

¹ Ուժը կորցրել է 01.01.2005 թվականին:

² Ուժը կորցրել է 01.01.2011 թվականին:

մասնավակ արտոնություն ոչ թե ՀՀ ռեզիդենտ սուբյեկտի, այլ այն մասնակցի համար, ով կօգտագործի հայաստանյան ծագման ռեսուրսներ:

Մեր կարծիքով, օտարերկրյա անձանց ազգային ռեժիմ տրամադրելն արդարացված է ոչ միայն նրանով, որ ժամանակից զլոբալացման պայմաններում տրամաբանական և կանխատեսելի է օտարերկրյա տարրերի մասնակցությամբ քաղաքացիական շրջանառությունը, այլ նաև նրանով, որ պետական գնումների նպատակը պետական պատվիրատուի տեսանկյունից հնարավորինս քիչ ծախսերով առավելագույն օգուտ ստանալն է: Պետական գնումների շնորհիվ բավարարվում է պետության կարիքները, և քանի որ ֆինանսավորումն էլ իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, պետական պատվիրատուին ձեռնտու է, մրցակցության ապահովման պայմաններում քիչ ծախսեր կատարելով, ձեռք բերել առաջարկվող լավագույն ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը: Տվյալ դեպքում (ընտրված) մասնակցի անձը դառնում է երկրորդական: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ կան որոշակի ոլորտներ, որտեղ ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման անհրաժեշտություն կա, օրենսդիրը հնարավորություն է տալիս սահմանավակել օտարերկրյա անձանց մասնակցությունը: Պատահական չէ, որ տնտեսապես զարգացած գրեթե բոլոր երկրները գնումների գործընթացում օտարերկրյա անձանց համար որդեգրել են ազգային ռեժիմ¹:

Գնումների ոլորտում հավասարության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրած օրենսդրական քաղաքականությունը բացառում է որևէ տեսակի արտոնության կիրառում որևէ անձի նկատմամբ: Այդուհանդերձ, ինչպես տեսության մեջ, այնպես էլ օտարերկրյա պետությունների իրավական ակտերում «տնտեսապես խոցելի անձանց» որոշակի արտոնություններ տրամադրվում են²: Ավելին, անգամ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 40-րդ կետով սահմանվել է, որ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով գնումներ իրականացնելիս քրեակատարողական համակարգի հաստատությունների և հիմնարկների, հաշմանդամների կազմակերպությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների համար կարող են սահմանվել առավելություններ: Այս արտոնությունները սոցիալական, տնտեսական նպատակներ են հետապնդում: Շահագրգռելով և ապահովելով, օրինակ, հաշմանդամների, քրեակատարողական համակարգի հաստատությունների մասնակցությունը պետական գնումներին՝ պետությունն իրացնում է իր ստանձնած սոցիալական պետության պարտականությունները՝ ինտեգրելով նման անձանց հասարակության մեջ: Ջարգացնելով փոքր և միջին ձեռնարկությունները՝ պետությունը խթանում է տնտեսությունը, տնտեսական մրցակցությունը, մեծացնում քաղաքացիական շրջանառությունը: Սոցիալական ուղղվածություն ունեցող ոչ առևտրային կազմակերպություններն էլ, պետական գնումներին մասնակցելով, կարողանում են ավելի արդյունավետ իրականացնել իրենց նպատակային սոցիալական ծրագրերը:

Պետական գնումներին մասնակցելը տնտեսվարող սուբյեկտների համար

¹ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Գորդոն Բրաունն անգամ պետական պրոտեկցիոնիզմը համարել է կործանման ճանապարհ (տե՛ս **Кокарева Л.М.** Регулирование государственных закупок в странах ЕС. Последние изменения регулирования госзакупок, вызванные глобальным экономическим кризисом, Госзаказ: управление, размещение, обеспечение. 2009. № 15, էջ 122):

² Տե՛ս օրինակ՝ Ռուսաստանի Պաշտպանության օրենսդրությունը (Федеральный закон от 05.04.2013 N 44-ФЗ (ред. от 28.12.2016) О контрактной системе в сфере закупок товаров, работ, услуг для обеспечения государственных и муниципальных нужд, 27-րդ, 30-րդ, հոդվածներ, աղբյուր՝ <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=210050#0>, 28.01.2017 թ. դրությամբ):

ծեռնտու է, որովհետև վերջիններս ունենում են կայուն շահույթ: Բացի այդ՝ պետական գնում սովորաբար իրականացվում է մեծ խմբաքանակի ապրանք՝ լայնածավալ աշխատանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու նպատակով, ինչն ավելի գրավիչ է դարձնում պետական գնումներին մասնակցելը, քանի որ փաստորեն ապահովվում են նաև երկարաժամկետ պայմանագրային հարաբերություններ: Հաշվի առնելով պետական գնումների առավելությունը՝ գնումներին մասնակցելու ցանկություն հայտնում են շատ տնտեսվարող սուբյեկտներ, ինչը ենթադրում է լուրջ մրցակցություն: Այդ գործընթացում հաղթելը բարդ է անգամ «ոչ խոցելի անձանց» համար, իսկ, օրինակ, փոքր և միջին ձեռնարկությունների համար գրեթե անհնար է դառնում: Հենց այս ամենով է պայմանավորված վերոնշյալ սուբյեկտներին արտոնություն տրամադրելը:

Պետք է նշել, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած «2012 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կատարած գնումների վերաբերյալ» հաշվետվության¹ մեջ հատուկ կարևորվել է **փոքր և միջին կազմակերպությունների** մասնակցությունը պետական գնումների գործընթացին: Հաշվետվության համաձայն՝ «...ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1259 որոշումով կատարվել են կանոնակարգային բարեփոխումներ, իրականացվել են տերմինաբանական շտկումներ, որոնք հնարավորություն են տվել խուսափել ընթացակարգերի անցկացման ժամանակ ի հայտ եկող մի շարք այլընտրանքային մեկնաբանություններից: Այդ բարեփոխումները միտված էին խթանելու նաև նոր բացված փոքր և միջին կազմակերպությունների մասնակցությունը պետական գնումներով իրականացվող ընթացակարգերին: ... Հստակեցվել է շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների ցանկը: Ընդլայնվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ իրականացնելու դաշտը: Դրա արդյունքում նպաստավոր պայմաններ է ստեղծվել գնումների գործընթացում **փոքր և միջին բիզնեսի ներգրավման**, հետևաբար նաև զարգացման համար»²: Հաջորդ տարիների հաշվետվություններում փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ նշում առկա չէ:

Բացի այդ՝ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման հիմնավորումներում նշված է, որ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ԱՀԿ պետական գնումների համաձայնագրի նոր տեքստին և Եվրասիական տնտեսական միության պայմանագրին համապատասխանության ապահովմամբ, իսկ որպես հատուկ եզրակացություն՝ նախագծին կցվել է նաև ««Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման» եզրակացություն»³:

Վերոնշյալը փաստում է այն մասին, որ պետական գնումներին մասնակցությունն էական նշանակություն ունի մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների համար, ինչը կարևորվում է նաև պետության կողմից: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության ոչ նախկին, ոչ էլ նոր օրենքները որևէ արտոնություն չեն նախատեսում ինչպես փոքր և միջին ձեռնարկությունների, այնպես էլ վերը թվարկված այլ անձանց համար:

Մեր կարծիքով, եթե պետությունը ստանձնում է հատուկ նպատակ հասարակության որոշակի շերտի համար գնումների ոլորտում բարենպաստ պայմաններ ստեղծելու համար, ապա դա պետք է դրսևորվի նաև օրենսդրական մակարդակով: Մասնավորապես, հաշվի առնելով, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը

¹ Տե՛ս <http://gnumner.am/am/category/198/1.html>, 28.01.2017 թվականի դրությամբ:

² Տե՛ս նշված հաշվետվության 3-4-րդ էջերը:

³ Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8415&Reading=0>, 28.01.2017 թվականի դրությամբ:

սոցիալական պետություն է, իսկ 86-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկն էլ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումն է, գտնում ենք, որ պետական գնումների գործընթացում արդարացի մրցակցություն ապահովելու նպատակով պետությունը փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների, ինչպես նաև խոցելի այլ խավերի համար պետք է ապահովի որոշակի արտոնություններ, մասնավորապես՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որոշակի՝ օրենքով սահմանված տոկոսային խմբաքանակ ձեռք բերելով նրանցից: Ընդ որում, արտոնություններ սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ որոշակի պետական պատվերների իրականացում ենթադրում է լուրջ ռեսուրսների առկայություն (օրինակ՝ կապիտալ շինարարությունը), որպիսի պայմաններ հնարավոր է, որ չունենան վերոնշյալ անձինք: Հետևաբար, արտոնություններ սահմանելիս պետք է հաշվի առնել նաև պետական պատվիրատուի շահը: Ուստի առաջարկում ենք արտոնություններ սահմանել մասնավորապես հետևյալ եղանակներով՝ մրցույթում հավասար պայմաններում առավելություն տալ վերոնշյալ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կոնկրետ խմբաքանակի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերել նշվածից անձանցից՝ պայմանով, որ վերջիններիս կողմից տրամադրվող ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համապատասխանեն սահմանված չափանիշներին: Որպես վերջին տարբերակի իրագործման եղանակ՝ առաջարկում ենք նման դեպքերում մրցույթներն անցկացնել միայն այդ անձանց շրջանակում:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Գնումների գործընթացին մասնակցող անձինք տարբեր իրավական ակտերում կոչվում են տարբեր կերպ: Կարծում ենք, որ նախքան պետական պայմանագիր կնքելը նրանց պետք է կոչել մասնակից կամ ընտրված մասնակից, իսկ պայմանագիր կնքելուց հետո նաև տվյալ պայմանագրի սուբյեկտներին տրվող անվամբ:

2. Պետական գնումներին օտարերկրյա անձանց մասնակցության վերաբերյալ տարբեր պետությունների մոտեցումները տարբեր են: Հայաստանի Հանրապետությունն ընտրել է ազգային ռեժիմը, ինչը, մեր կարծիքով, արդարացված է, որովհետև այն ապահովում է առավելագույն մրցակցություն, հնարավորություն է տալիս տարբեր մասնակիցների միջից ընտրել այն անձին, ում հետ պայմանագիր կնքելով՝ պետությունը կստանա առավելագույն օգուտ՝ նվազագույն ծախսերով: Ընդ որում, օրենսդրական կարգավորումը թույլ է տալիս խուսափել նաև ազգային անվտանգությանը և պաշտպանությանը վտանգ ներկայացնող դեպքերից՝ հնարավորություն տալով նման դեպքերում սահմանափակել օտարերկրյա անձանց մասնակցությունը: Օտարերկրյա անձանց մասնակցությունը հնարավորություն է տալիս նաև զարգացնել տնտեսությունը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով հնարավոր ներդրումների համար:

3. Նպատակ ունենալով առավել զարգացնել գնումների գործընթացում մրցակցությունը, ինչպես նաև մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների արդյունավետ մասնակցությունը՝ առաջարկում ենք ներդնել արտոնությունների օրենսդրական համակարգ՝ մրցույթում հավասար պայմաններում առավելություն տալով վերոնշյալ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կոնկրետ խմբաքանակի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերել նրանցից՝ պայմանով, որ վերջիններիս կողմից տրամադրվող ապրանքները, աշխատանքները և ծառայությունները համապատասխանեն սահմանված չափանիշներին:

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА УЧАСТНИКОВ ПРОЦЕССА ЗАКУПОК

Нанэ Саакян

Аспирант Кафедры гражданского права ЕГУ

В этой статье исследована общая характеристика лиц, участвующих в процессе закупок, предложено общее определение для этих лиц. Так же исследована особенность участия иностранных лиц, в частности, предоставление им национального режима. В статье предложено введение системы привилегий и льгот для малых и средних предприятий с целью повышения эффективности их участие.

GENERAL CHARACTERISTICS OF THE PARTICIPANTS OF THE PUBLIC PROCUREMENT

Nane Sahakyan

PHD Student of the YSU Chair of Civil Law

This article studies the general characteristics of the persons involved in the procurement process. It proposes the common name for these individuals. The article also exposes speciality of the participation of foreign persons in the public procurement process especially the national treatment of foreign persons. Besides, the system of privileges for small and medium-sized enterprises is suggested in this article in order to make their participation more efficient.

Բանալի բառեր – պետական գնում, պետական պայմանագիր, գնումների գործընթացի մասնակից, գնումներին մասնակցելու հավասարություն, օտարերկրյա անձանց ազգային ռեժիմ, փոքր և միջին ձեռնարկություններին տրվող արտոնություններ

Ключевые слова: государственные закупки, участник процесса закупок, равноправие в процессе закупок, национальный режим для иностранных лиц, привилегии для малых и средних предприятий.

Key words: public procurement, state contract, the participants of the procurement, equality in the procurement process, national treatment to foreign person, privileges for small and medium-sized enterprises.